

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ



Գ.Գ.ԳԱԼՈՅԱՆ

« 7 » Տառիկ 2023թ

ԿԱՐԾԻՔ

առաջատար կազմակերպության

Մարտին Գեղամի Տոնիկյանի «ՀՀ բանկային համակարգում
ակտիվների որակի կարգավորման արդիականացում» թեմայով,
Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի «Բանկային գործի և ապահովագրության» 06.03.2023թ.-ի N8
ամբիոնի նիստում: Նիստին ներկա էին՝ «Բանկային գործի և ապահովագրության»
ամբիոնի վարիչ, տ.գ.թ. դոցենտ Ա.Մարդոյանը (նախագահող), տ.գ.թ., դոցենտ Ն.
Սաֆարյանը (գրախոսող), տ.գ.թ., դասախոս Հ.Սարգսյանը (գրախոսող), տ.գ.թ.,
դոցենտ Ռ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Մխիթարյանը, տ.գ.թ., դոցենտ
Լ.Ղազարյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հարությունյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Սարգսյանը,
տ.գ.թ., դասախոս Տ.Բեկթեմուրյանը, դասախոս Ա.Ավետիսյանը, դասախոս
Ա.Նահապետյանը, ամբիոնի ավագ լաբորանտ Հ.Սաֆարյանը:

Արենախոսության թեմայի արդիականությունը

Առևտրային բանկերի գործունեության հիմանական սկզբունքը
գործունեության իրականացումն է սեփական և ներգրաված միջոցների շրջանակում,
ինչը նշանակում է, որ բանկերը պետք է ապահովեն քանակական
համապատասխանություն իրենց ռեսուրսների և ներդրումների միջև: Բանկերի
վճարունակության և իրացվելիության խնդիրներից խուսափելու համար պետք է
ապահովել ոչ միայն քանակական, այլ նաև ժամկետային համապատասխանություն
իրենց ռեսուրսների և ներդրումների միջև: Այսինքն՝ ցանկացած ներդրումային
գործունեություն իրականացնելիս բանկը պետք է ուշադրություն դարձնի
տեղաբաշխվող միջոցների ձևավորման աղբյուրներին: Բանկի շահույթը

ձևավորվում է բանկային գործառնություններ իրականացնելու արդյունքում հաճախորդներից գանձվող և նրանց վճարվող տոկոսների տարբերությունից, ինչպես նաև մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող միջնորդավճարների հաշվին:

Ներկայումս առևտրային բանկերի ֆինանսական վիճակը որոշում են ելնելով ակտիվային գործառնություններ կատարելու հետ կապված ռիսկից և բանկային կապիտալի մակարդակից: Անկասկած, դրանք կարևոր նշանակություն ունեն, սակայն հարկավոր է նաև հաշվի առնել, որ բանկերի կայունությունը մեծ չափով կախված է նաև նրանց ռեսուրսային բազայի կայունությունից: Սա հատկապես կարևոր նշանակություն ունի շուկայական հարաբերությունների սկզբնական շրջանում գտնվող առևտրային բանկերի համար: Այստեղ ակտիվ ասելով պետք է հասկանալ իրավաբանական կամ ֆիզիկական անձին պատկանող ցանկացած նյութական և ոչ նյութական միջոց, որն ունի շուկայական, փոխանակային կամ հաշվեկշռային արժեք: Բանկային ակտիվների կառուցվածքը պայմանավորված է տվյալ բանկի գործունեության ոլորտով:

Հետազոտական թեմայի ընտրության համար մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, որ ժամանակակից ֆինանսական շուկան հատկանշվելով արագ զարգացող փոփոխություններով առևտրային բանկերի համար ստեղծել է նոր մարտահրավերներ այդ զարգացումներին և փոփոխություններին ինտեգրվելու գործընթացում: Ճիշտ է, 2022 թվականին ՀՀ առևտրային բանկերի շահույթն անգամներով ավելացել է, սակայն տնտեսության «գերտաքացած» վիճակը հետագայում կարող առաջացնել ակտիվների որակի հետ կապված խնդիրներ: Այս համատեքստում անհրաժեշտություն է առաջանում առևտրային բանկերի ակտիվների որակի կառավարման գործընթացում կիրառել նոր և ապագային միտված գործիքակազմ: ՀՀ-ում առևտրային բանկերը իրենց գործունեության գրեթե բոլոր ոլորտներում հիմնականում առաջնորդվում են ավանդական մեթոդներով, սակայն մրցակցությունը և տնտեսական զարգացման մարտահրավերները պահանջում են համապատասխան քայլեր ձեռնարկել ժամանակակից ֆինանսական շուկաների կառուցվածքին հարմարվելու համար:

Արենախոսության հիմնական բովանդակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը

Հետազոտության հիմնական նպատակն է հանդիսացել ՀՀ առևտրային բանկերում ակտիվների որակի կառավարման մոդելների կատարելագործման ուղիների սահմանումը:

Այս նպատակի իրագործման համար հետազոտության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Գիտական աղբյուրների հիման վրա հետազոտել հիմնախնդրի էությունը, հստակեցնել առաջադրված խնդիրների սահմանները,
- Հստակեցնել բանկերի ակտիվների քանակական և որակական հուսալիության բնութագրիչները, բանկային կայունության վրա ազդող տարաբնույթ մոդելների ազդեցությունը,
- Ուսումնասիրել բանկային համակարգում ակտիվների որակի գնահատման ժամանակակից իրավիճակը աշխարհում և մասնավորապես ՀՀ-ում,
- Ուսումնասիրել բանկերի ակտիվների որակի միկրո և մակրո դետերմինանտները, որոնք թույլ կտան ճգնաժամային պայմաններում կանխատեսել չաշխատող վարկերի դինամիկան,
- Կիրառել կորելյացիոն, ռեգրեսիոն, համեմատական և էքստրապոլյացիոն տվյալներ
- ՀՀ բանկային համակարգի համար մշակել ակտիվների որակի կատարելագործման մոդելներ

Դիպոզություններ ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող ատենախոսությունն, իր դրական արժանիքներով հանդերձ, ունի նաև որոշակի թերություններ, որոնցից կարելի է նշել հետևյալները.

1. Ատենախոսության անվանումն է՝ «Ակտիվների որակի կարգավորման արդիականացումը ՀՀ բանկային համակարգում», մինչդեռ հետազոտությունն ամբողջությամբ իրականացվել է առավելապես վարկերի գծով: Հեղինակն ինքն ատենախոսության էջ 72-ում բառացիորեն նշում է հետևյալը՝ «Ակտիվների որակ» եզրը ՀՀ բանկերի պարագայում մենք կօգտագործենք միայն բանկերի կողմից տրամադրված վարկերի որակի համատեքստում: Գիտական հետազոտության ամբողջ տրամաբանությունը և վերլուծական գործիքակազմն առնչվում է վարկերի որակի գնահատման հետ: Աշխատանքում, որոշ բացառություններով հանդերձ, կարելի է պնդել, որ ՀՀ առևտրային բանկերի ակտիվների մյուս տեսակները (թղթակցային հաշիվներ, արժեթղթեր և այլն) ընդհանրապես չեն քննարկվել: Հետևաբար, ատենախոսությունը պետք է վերնագրվեր՝ «Վարկերի որակի կարգավորման արդիականացումը ՀՀ բանկային համակարգում»:
2. Աշխատանքն էլ ավելի կշահեր, եթե դիտարկվեր ՀՀ բանկային համակարգի ակտիվների որակի կառավարման առանձնահատկությունները «Covid-19» համաճարակի պայմաններում և արցախյան պատերազմի հետևանքներով պայմանավորված պատերազմի մասնակիցների, զոհվածների ընտանիքների վարկերի համատարած ներումների, տույժերի հաշվեգրման դադարեցումների,

ՀՀ Կառավարության հակաճգնաժամային մի շարք քայլերի, գործողությունների վերլուծությունը, նոր ՖԱՍՏ բանկ ՓԲԸ-ի ՀՀ առևտրային բանկերի ցանկում հայտնվելու, վերջինիս ցուցանիշները վերհանելու, թերևս բաց է մնացել նաև վարկային կազմակերպությունների համեմատական փոքր վերլուծությունը վերջիններիս ցուցանիշերի գծով և համեմատական տարվեր առևտրային բանկերի կտրվածքով ևս: Բացակայում է նաև ակտիվների և պարտավորությունների արժույթային կառուցվածքը, առկա ռիսկերը այդ մասով ևս:

3. Հետազոտության և վերլուծությունների համար տեղեկատվական բազան հստակեցման կարիք ունի: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ բանկային համակարգի միտումների ամբողջական և իրատեսական գնահատումները բավական բարդ է՝ կապված բանկային գաղտնիք համարվող տեղեկատվության հետ, որոնք ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարզապես չեն հրապարակվում: Հետևաբար վերլուծությունների և հետազոտությունների համար որպես հիմք կարող են ծառայել կամ ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակված, կամ էլ Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) կայքում հրապարակվող վիճակագրական տեղեկատվությունը: Նշենք, որ վերը ներկայացված մեթոդաբանությունները միմյանցից տարբերվում են, որոնք պատճառ են հանդիսանում ՀՀ բանկային համակարգի ցուցանիշների որոշակի տարբերությունների: Հետազոտության նպատակով իրատեսական է մեկ միասնական տեղեկատվական տվյալների վերլուծությունը և եզրահանգումների ներկայացումը: Օրինակ՝ հեղինակը ատենախոսության 101 էջում նշում է, որ վերջին ժամանակները ՀՀ առևտրային բոլոր բանկերի շահութաբերության ցուցանիշն ըստ ակտիվների (ROA) կազմել է 2%, մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակումներով՝ այս ցուցանիշը անհամեմատ ցածր է (2015թ-ին՝ - 0.6%, 2018թ-ին՝ 0.8%, 2020թ-ին՝ 1.04%, 2021թ-ին՝ 0.9% և միայն հայտնի պատճառներով աննախադեպ համարվող 2022թ-ին՝ այն կազմել է 3.2%):
4. Վարկերի որակի գնահատման համար հեղինակի կողմից կիրառվել է բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ), որը կիրառվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից, սակայն բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն է և չի հրապարակվում: Իր բոլոր առավելություններով հանդերձ, ՔԱՄԵԼՍ գնահատականն ունի մեկ առանցքային թերություն՝ այն գնահատական է դիսկրետ պահի դրությամբ և, օրինակ, վարկերի որակի առումով ապագայի կանխատեսումներ չի տալիս: Կարծում ենք, որ վարկերի որակի գնահատման առումով առանձնահատուկ կարևոր նշանակություն ունի կարճաժամկետ և երկարաժամկետ վարկանշումը՝ ճիշտ նույն տրամաբանությամբ ինչպես դա կատարում են վարկանիշ շնորհող գործակալությունները: Ավելին, ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի կողմից վարկերի որակի գնահատման կանխատեսումների համար

լայնորեն կիրառվում են սթրես-թեստերը: Բավական տեղեկատվություն կտար հեղինակի կողմից դրամարկղային մեթոդով կազմվող միակ՝ Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվությունների ուսումնասիրությունը՝ Գործառնական ակտիվների գծով (աճ)/նվազում – հաճախորդներին տրված ամորտիզացիոն արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխառություններ: Հարկ է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկն անցում է կատարել ռիսկերի վրա հիմնված վերահսկողությանը և յուրաքանչյուր բանկի վարկային պորտֆելի որակի գնահատման ժամանակ քանակական ցուցանիշների հետ մեկտեղ կիրառում է տվյալ կոնկրետ բանկի համար ռիսկային գործարքների հստակ տարանջատում: Հետևաբար, հետազոտության թերություններից կարելի է համարել վարկերի որակի միտումների կանխատեսումների բացակայությունը, որը ներկայիս անորոշությունների և ռիսկերի պարագայում առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում հայկական բանկերի համար:

5. Աշխատանքում բացակայում է ակտիվների կենտրոնացվածության մի շարք ցուցանիշներ ևս, օրինակ՝ անհրաժեշտ էր կատարել Հերֆինդալ Հիրշմանի հաշվարկ, չկար նաև հաշվարկ բանկի գործունեության միասնական հաշվետվության տարրերի և դրանց հաշվարկման մեթոդաբանության առանձնահատկությունները ՀՀ առևտրային բանկերի օրինակով, որն էլ ավելի կհարստացնեք աշխատանքը:
6. Հետազոտության մեջ տեղ են գտել բառացի կրկնություններ: Այսպես, օրինակ էջ 32-35 ներկայացված շարադրանքը բառացիորեն կրկնվում է աշխատանքի 43-44 և 73 էջերում: Էջ 38-39-ում ներկայացված չեն ՔԱՄԵԼՍ-ի Լ (հրացվելիություն) և Ս (շուկայական զգայունություն) տարրերը: Ի դեպ, ատենախոսության մեջ բազմաթիվ տեղերում ՔԱՄԵԼՍ գնահատականը ներկայացված է որպես ՔԱՄԵԼ՝ այսինքն առանց զգայունության տարրի: Հիմնավորված չէ էջ 47-49-ում ներկայացված շարադրանքի և բանկի եկամտաբերության հաշվարկի միջև գոյություն ունեցող կապը: Էջ 81-ում ներկայացված աղյուսակ 1-ում ներկայացված են կապիտալի համարժեքության ցուցանիշներ, մինչդեռ աղյուսակը վերնագրված է՝ ֆինանսական խթանի ցուցանիշներ: Էջ 27-ում խոսվում է COVID 19-ի մասին, սակայն հղումը կատարվել է 2010 թ-ի գրականությանը:

Եզրակացություն

Հետազոտության խնդիրների և ստացված արդյունքների հիմնադրույթներն արտացոլված են ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Մարտին Գեղամի Տոնիկյանի «ՀՀ բանկային համակարգում ակտիվների որակի կարգավորման արդիականացում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը, վերագրյալ դիտողություններին պաշտպանության ժամանակ պարզաբանում ներկայացնելու պարագայում՝ արժանի կլինի տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Բանկային գործի և ապահովագրության» 06.03.2023թ.-ի (արձանագրություն թիվ 8) ամբիոնի նիստում:

ՀՊՏՀ «Բանկային գործի և ապահովագրության»
ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ

Ա.Վ.Մարդոյան

«Բանկային գործի և ապահովագրության»
ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

Ն.Ա.Սաֆարյան

«Բանկային գործի և ապահովագրության»
ամբիոնի դասախոս, տ.գ.թ.

Հ.Ա.Սարգսյան

Ա.Վ.Մարդոյանի, Ն.Ա.Սաֆարյանի և Հ.Ա.Սարգսյանի ստորագրությունները
հաստատում են՝

ՀՊՏՀ գիտքարտուղար

Ն.Հ.Դարբինյան

04.03.2023

